

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈԲԼԵՄԸ

ԴՈՆՍՐԱ ԱԶԱՐՅԱՆ

Արտադրողական աշխատանքի պրոբլեմը հաճախ է ուսումնասիրվում ժողովրդական տնտեսության նյութական և ոչ նյութական ոլորտների, ազգային եկամտի, հասարակական ամբողջական արդյունքի և այլ պրոբլեմների վերլուծությանը նվիրված տնտեսագիտական հետազոտություններում: Ընդ որում, շատ տնտեսագետներ նյութական և ոչ նյութական ոլորտների բնորոշման ու սահմանազատման հարցը շփոթում են արտադրողական աշխատանքի պրոբլեմի հետ և արտադրողական համարում միայն նյութական արտադրության ոլորտում ծախսվող աշխատանքը¹: Այդ տեսակետի հետևորդներն արժեք և ազգային եկամուտ ստեղծելու հատկություն վերագրելով միայն նյութական արտադրությանը, գտնում են, որ ոչ նյութական արտադրության ոլորտի աշխատողների եկամուտները հանուրը են նյութական արտադրության աշխատողների եկամուտներին: Իրենց տեսակետը հիմնավորելու համար այդ տրեստեսագետները, սովորաբար, համոզիչ փաստարկներ չեն բերում: Նրանք ոչ նյութական արտադրությունն անարտադրողական աշխատանքի կիրառման ոլորտ են համարում ելնելով այն հանգամանքներից, որ աշխատանքի արդյունքներն այստեղ նյութական տեսք չունեն կամ վերարտադրելի չեն, և որ աշխատանքի ներգրծության օբյեկտը բնության առարկաները չեն: Փոխանակ աշխատանք ծախսվելու փաստն արժեքի ստեղծման համար որպես հիմք ընդունելու, նրանք առաջին պլան են մղում աշխատանքի պրոցեսի որոշ առանձնահատկությունները և սպառողական արժեքների տարբերությունը, որոնք ոչ մի կապ չունեն արժեքի բնորոշման հետ: Իսկապես, արժեքը, որպես այդպիսին, բացի աշխատանքից իր մեջ այլ «նյութ» չի պարունակում և հանգում է աշխատանքի քանակին²: Այստեղից ակնհայտ է դառնում, որ հենց ինքը՝ ձևակերպումը, թե ոչ նյութական ոլորտում աշխատանքն անարտադրողական է, արժեք չի ստեղծում, ճիշտ չէ, քանի որ արժեքի աղբյուրն աշխատանքն է: Իսկ ինչպե՞ս է, որ այն չի կարողանում արժեք ստեղծել: Իրականում, ապրանքային հարաբերությունների պայմաններում արդեն այն հանգամանքից, որ որևէ քանակապես հասարակությանն անհրաժեշտ աշխատանք է ծախսվում, օրինաչափորեն և անառարկելիորեն բխում է այն եզրակացությունը, որ այստեղ արժեք է ստեղծվում:

Ոչ նյութական բարիքների արժեքային բնույթը ժխտող տնտեսագետները միաժամանակ գտնում են, որ ոչ նյութական արտադրության արդյունքները սպառողական արժեք ունեն, որովհետև սոցիալիզմի ժամանակ հասարակական աշխատանքի բոլոր տեսակներն անհրաժեշտ ու օգտակար են:

¹ М. И. Скаржинский, Труд в непроизводственной сфере, М., 1968, с. 16; А. И. Кочерга, Сфера обслуживания населения, М., 1979, с. 57; Г. П. Иванов, Непроизводственная сфера и социалистическое воспроизводство, М., 1978, с. 33; Д. И. Правдин, Развитие непроизводственной сферы при социализме (темы, пропорции, перспективы), М., 1976, с. 127; М. В. Солодков, А. И. Семенхин, Фонд личного потребления нематериальных благ, М., 1979, с. 43; Я. А. Кронрод, Социалистическое воспроизводство, М., 1955, с. 134 և ուրիշներ:

² К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 23, с. 56, т. 29, с. 254, 257.

Ստացվում է, որ ոչ նյութական արտադրության ոլորտում կոնկրետ աշխատանքով սպառողական արժեքներ են ստեղծվում, բայց արժեք չի ստեղծվում, և արտադրության միջոցները կիրառվում են անարտադրողաբար: Իսկ դա իր հերթին հանգեցնում է այն հետևությանը, որ ապրանքային արտադրության պայմաններում աշխատանքն արտադրական հարաբերություններին մասնակցում է իր մեկ (կոնկրետ) կողմով, իսկ մյուսով (վերացական կողմով) չի մասնակցում:

Տնտեսագետներից ոմանք փորձում են իրենց տեսակետը հիմնավորել նրանով, որ հոգևոր կուլտուրայի ստեղծագործությունները, լինելով անվերարտադրելի, իբր արժեք չունեն և դրանց գները որոշվում են պահանջարկի ազդեցության տակ³: Տվյալ դեպքում առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը գների գոյացման գլխավոր գործոնն է, որը դեռևս չի նշանակում, թե այդ բարիքներին արժեք չունեն: Վերջիններիս արտադրության վրա օգտակար աշխատանք է ծախսվում, որը վկայում է դրանց արժեք ունենալու: Ընդ որում, այդ արժեքի մեծությունն արդեն որոշվում է ոչ թե արտադրության միջին, այլ անհատական պայմաններով, քանի որ դրանց արտադրությամբ զբաղվում են առանձին մարդիկ, որոնցից յուրաքանչյուրի անհատական ձիրքից է կախված այդ բարիքների գնահատումը: Արվեստի ստեղծագործությունների արժեքի ու գնի միջև մեծ տարբերությունն առաջանում է այն պատճառով, որ տվյալ դեպքում գնագոյացման պրոցեսում արժեքը միակ գործոնը չէ: Բայց, դրա հետ միասին, գոյություն ունեն նաև նյութական այնպիսի բարիքներ, որոնց գները ևս հիմնականում որոշվում են առաջարկի ու պահանջարկի ազդեցությամբ (սահմանափակ քանակությամբ արտադրվող նյութական որոշ բարիքներին՝ գյուղատնտեսական որոշ մթերքներ, պահուստաված գինիներ և այլն): Այդ ինչպե՞ս է, որ վերջիններիս վերաբերյալ չեն պնդում, որ դրանք արժեք չունեն, երբ այս դեպքում ևս գինն արժեքի մեծությունից մեծ կախում չունի:

Ոչ նյութական բարիքների ոչ արժեքային բնույթի մասին պատկերացումների ձևավորմանը որոշ չափով նպաստում է նաև դրանց վճարման համար հասարակական ֆոնդերի ստեղծումը: Այդ դեպքում այն տալովորություն է ստեղծվում, թե ոչ նյութական բարիքներն անվճար են տրամադրվում, իսկ դրանք ստեղծող աշխատողները նյութական ոլորտի հաշվին են պահպանվում: Բայց չպետք է սահմանափակվել միայն բաշխման ու փոխանակության երևութական առանձնահատկություններով, պետք է թափանցել դրանց էության մեջ: Իրականում երկու ոլորտների աշխատողների միջև տարբերություններ չկան: Նյութական արտադրության աշխատողները, հասարակությանը տալով իրենց աշխատանքի արդյունքները, դրանց մի մասի փոխարեն աշխատավարձ են ստանում, իսկ սպառման հասարակական ֆոնդերի հաշվին օգտվում են ոչ նյութական մի շարք բարիքներից: Նույն ձևով էլ ոչ նյութական ոլորտի աշխատողներն են իրենց աշխատանքի փոխարեն աշխատավարձ և անվճար նյութական բարիքներ ստանում: Այդ անվճար բարիքները տրամադրվում են սոցիալիստական հասարակության բոլոր աշխատավորների անհրաժեշտ աշխատանքի այն մասի հաշվին, որի դիմաց նրանք դրամական վարձատրություն չեն ստանում: Անհատ սպառողների կողմից անվճար ծառայությունների սպառման ժամանակ այն տալովորություն է ստեղծվում, թե վերջիններիս արժեք չունեն, որովհետև սպառողը դրանց փոխարեն ոչինչ չի վճարում և յուրաքանչյուր առանձին սպառողի կողմից դրանց սպառումը կախված չէ հասարակական ֆոնդերի ստեղծմանը նրա աշխատանքային ներդրումից: Փոխանակության համարժեքության այդ խախտումը վերաբերում է առանձին սպառողին ու ծառայության առանձին տեսակին, իսկ

³ М. В. Колганов, Национальный доход. (Очерки по истории и теории вопроса), М., 1959, с. 90, В. С. Неркаряна, Производительный и непроизводительный труд (Автореферат дисс. на соиск. уч. ст. доктора экон. наук), Ереван, 1972, с. 9.

ամբողջ հասարակության մասշտաբով համարժեքությունը պահպանվում է, որովհետև հասարակությունը ճիշտ այնքան «անվճար» ծառայություններ է ստանում, որքան ներդրել է համապատասխան հասարակական ֆոնդերի ստեղծման համար: Եթե բարիքները սպառման հասարակական ֆոնդերի միջոցով չբաշխվեն, ապա դրանց վաճառքն ու գնումը տեղի կունենար սովորական ձևով և ոչ նյութական բարիքների արժեքային բնույթի վերաբերյալ ոչ մի կասկած չէր առաջանա: Որոշ տնտեսագետներ⁴ իրենց տեսակետը հիմնավորելու համար փորձում են հենվել Կ. Մարքսի ուսմունքի վրա, նշելով, որ Կ. Մարքսն արտադրողական աշխատանքի կատեգորիան քննարկել է երկու տեսանկյունով՝ աշխատանքի որոշակի հասարակական ձևից կախված և աշխատանքի բովանդակության կամ նրա արդյունքի տեսակետից: Երկրորդ մոտեցման դեպքում նրանք Կ. Մարքսին են վերագրում իրենց կարծիքներն այն մասին, որ արտադրողական են միայն նյութական արտադրության ճյուղերը և որ արժեք ունեն միայն նյութական բարիքները:

Կ. Մարքսն իրոք նշել է, որ արտադրողական աշխատանքի պրոբլեմն ունի երկու կողմ՝ մի կողմից այն ներառում է համընդհանրության մոմենտը (կիրառելիությունը հասարակական բոլոր ֆորմացիաների համար), մյուս կողմից՝ յուրահատուկ կողմը՝ առանձնահատկությունը մարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերում⁵, ինչ վերաբերում է երկրորդ կողմին, ապա այն արտադրողական աշխատանքի գլխավոր հատկանիշն է: Ֆեոդալիզմի դարաշրջանում իշխող դասակարգի տեսանկյունից «արտադրողական» էր ճանաչվում միայն հողագործների աշխատանքը, որովհետև միայն այն էր հողատիրոջը ռենտա բերում: Կապիտալիզմի պայմաններում արտադրողական է այն աշխատանքը, որը ստեղծում է հավելյալ արժեք, նյութական հիմք է ապահովում կապիտալիստական արտադրական հարաբերությունների վերարտադրության (ընդլայնված) համար:

Այստեղից հասկանալի է դառնում, թե ինչու էր Կ. Մարքսն աշխատանքի միևնույն տեսակը մի դեպքում համարում արտադրողական, իսկ մյուս դեպքում՝ անարտադրողական, չնայած երկու դեպքում էլ աշխատանքն ունի միևնույն բովանդակությունը: միևնույն արդյունքները: Իսկ արտադրողական աշխատանքն ընդհանրապես, հասարակական ձևից անկախ քննարկելիս, Կ. Մարքսը ոչ թե որպես արտադրողական առանձնացնում էր նյութական բարիքներ ստեղծող աշխատանքը, այլ արտադրողական էր համարում ընդհանրապես ամեն մի նպատակահարմար գործունեություն, ընդհանրապես սպառողական արժեքներ ստեղծող աշխատանքը: «Աշխատանքի պրոցեսը, — գրել է նա, — ինչպես որ մենք այն պատկերենք նրա պարզ ու բարտրակտ մոմենտներով, նպատակահարմար գործունեություն է սպառողական արժեքներ ստեղծելու համար, բնության տվածի յուրացում է մարդկային պահանջմունքները բավարարելու համար, մարդու և բնության միջև նյութերի փոխանակության ընդհանուր պայման է, մարդկային կյանքի հավիտենական բնական պայման, ուստի և նա կախված չէ այդ կյանքի որևէ ձևից, այլ, ընդհակառակը, հավասարապես ընդհանուր է մարդկային կյանքի բոլոր հասարակական ձևերի համար»⁶: Միևնույն ժամանակ Կ. Մարքսը նշել է. «Արտադրողական աշխատանքի այդ սահմանումը, որ աշխատանքի պարզ պրոցեսի տեսակետից է ստացվում, բոլորովին բավական չէ արտադրության կապիտալիստական պրոցեսի համար»⁷: Նշանակում է, որ սպառողական արժեք ունենալու տեսակետից ոչ նյութական ոլորտի աշխատանքը ոչնչով չի տարբերվում նյութական ոլորտի աշխատանքից, իսկ եթե այն ապրանքային հարաբերություն-

4 А. И. Кочерга, *նշվ. աշխ.*, էջ 40, Г. П. Иванов, *նշվ. աշխ.*, էջ 79; М. В. Солодков, *Непроизводственная сфера при социализме. (Вопросы теории и методологии производительного труда)*, М., 1978, с. 29, 62—68.

5 К. Маркс, Ф. Энгельс, *Соч.*, т. 26, ч. 1, с. 134., 400, 404.

6 Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 1, Երևան, 1954, էջ 195:

7 Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 1, էջ 192:

ների մեջ է ընդգրկված, չի տարբերվում նաև արժեք ունենալու տեսակետից: Պարզ ապրանքային արտադրության պայմաններում կատարվող նման աշխատանքը միայն կապիտալիստական արտադրության տեսանկյունից կարող է լինել անարտադրողական, որովհետև նրա արդյունքները, ունենալով սպառողական արժեք և արժեք, հավելյալ արժեքի կրող չեն: Բայց այդպիսին են նաև կապիտալիստորեն չարտադրվող նյութական բարիքները՝ իսկ արդյունքի առարկայացումը որպես արտադրողական աշխատանքը տարբերելու այլ կափանիչ ընդունել է Ա. Սմիթը, որի համար Կ. Մարքսը քննադատել է նրան: Ա. Սմիթը, մերկանտիլիզմի մոնետար սիստեմից և ֆիզիոկրատներից ընդունելով աշխատանքն արտադրողականի և ոչ արտադրողականի բաժանելու հասկացությունը, ընդլայնեց արտադրողական աշխատանքի ոլորտը՝ աղնիվ մետաղների արտադրության և գյուղատնտեսության մեջ ծախսվող աշխատանքի հետ այդ շարքին դասելով նաև ինդուստրիալ աշխատանքը, որը լսվրադված է նյութական-առարկայական արդյունքների արտադրությանը: Նրա կարծիքով, արտադրողական է այն աշխատանքը, որը, առարկայանալով որևէ իրի մեջ, իրենից հետո թողնում է իր գործունեության հետքերը և որի արդյունքը կարող է լինել վաճառքի կամ փոխանակության առարկա⁸:

Սմիթն արտադրողական աշխատանքը երկրորդ, սխալ ընդորշման մեջ բնութագրում է հետևյալ հատկանիշներով. ոչ արտադրողական աշխատողի աշխատանքը «ոչ մի արժեք չի արտադրում», նրա «պահպանման ծախսը երբեք չի վերադառնում», այն «չի ֆիքսվում կամ առարկայանում ոչ մի երկար ժամանակ գոյություն ունեցող առարկայում կամ վաճառքի համար պիտանի ապրանքում»: Ա. Սմիթի այս տեսակետի մասին Կ. Մարքսը գրել է. «Աշխատանքի այս բնութագիրը նրա իրային կողմից ամենևին կապված չէ արտադրողական աշխատանք լինելու նրա հատկության հետ, որը, ընդհակառակը, արտահայտում է միայն որոշակի հասարակական արտադրական հարաբերություն»⁹: Ուրեմն, երբ խոսում ենք արտադրողական աշխատանքի մասին, նկատի ունենք որոշակի հասարակական ձևով կատարվող աշխատանքը:

Եվ, այնուամենայնիվ, սովետական մի շարք տնտեսագետներ հետևում են Ա. Սմիթի երկրորդ ձևակերպմանն ու համառորեն պնդում, որ արժեք ստեղծում է միայն այն աշխատանքը, որն առարկայանում է նյութական արդյունքում¹⁰: Փաստորեն արտադրողական աշխատանքի ըմբռնման հարցում նրանք տարբերություն չեն տեսնում Ա. Սմիթի և Կ. Մարքսի տեսակետների միջև, շփոթում են արտադրողական աշխատանքի իմաստը յուրաքանչյուր գործածության ժամանակ: Պատճառն այն է, որ Կ. Մարքսը ծառայություն է անվանել ոչ միայն ոչ նյութական ոլորտի արդյունքները, այլև կապիտալիստական հասարակության տեսակետից անարտադրողական համարվող գործունեության տեսակները: Առանց պարզաբանելու Կ. Մարքսի յուրաքանչյուր արտահայտության իմաստը, նրանք ոչ նյութական ոլորտը համարում են անարտադրողական ոլորտ: Սակայն պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ կապիտալիզմի ժամանակ բոլորական պետական ապարատը, դատարանը, ոստիկանությունը ծառայել են տիրող դասակարգի շահերի պաշտպանմանը, իսկ լուսավորության, առողջապահության, արվեստի աշխատողները, ինչպես և տնային ծառայողները հիմնականում սպասարկել են կապիտալիստների կարիքները և միայն աննշան չափով՝ բանվորներին: Բանվորների համար այդ աշխատողները հա-

⁸ А. Смит, Исследование о природе и причинах богатства народов, т. I, М.—Л., 1931, с. 336.

⁹ Նույն տեղում, էջ 338—339:

¹⁰ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, с. 139.

¹¹ М. И. Скаржинский, *Նշվ. աշխ.*, էջ 16, Д. И. Правдин, *Նշվ. աշխ.*, էջ 127; И. М. Шнейдерман, Статистика услуг, М., 1974, с. 16; Т. В. Рябушкин, Экономическая статистика, М., 1966, с. 172 և սրիշեր:

մարյա ոչ մի սպառողական աղծեք չէին ստեղծում և պահպանվում էին նյութական արտադրության աշխատողների ստեղծած հավելյալ արդյունքի հաշվին: Իսկ կապիտալիստների դասակարգի տեսանկյունով վերցնելու դեպքում ոչ նյութական ոլորտի աշխատողներն անարտադրողական էին, որովհետև հավելյալ արժեք չէին ստեղծում: Նրանք կապիտալիստների համար արտադրում էին որոշակի սպառողական արժեքներ ու արժեքներ, որոնց համար վերջիններս պետք է վճարեին: Նշանակում է, կապիտալիստների համար ընդհանուր առմամբ լինելով արտադրողական, այդ աշխատողները հավելյալ արժեքի արտադրությանը մասնակցելու տեսակետից անարտադրողական են:

Արտադրողական աշխատանքի պրոբլեմի վերաբերյալ հակասական կարծիքների ձևավորմանը նպաստում է նաև այն, որ Կ. Մարքսը կապիտալիստական արտադրական հարաբերությունների սիստեմն ուսումնասիրել է հիմնականում նյութական արտադրության օրինակով: Եվ այն, ինչ սասել է Կ. Մարքսը կապիտալիստական առտադրության մասին, որոշ տեսնագետներ վերագրում են միայն նյութական արտադրությանը: Նշենք, որ Կ. Մարքսը ոչ նյութական ոլորտից վերացարկվել է գիտակցաբար և ոչ առանց հիմքերի: Այդ բնագավառում կապիտալի արտադրության բոլոր դրսևորումները նրա արտադրության ամբողջության նկատմամբ այնքան աննշան էին (ինչպես և ամբողջ արտադրության նկատմամբ), որ կարող էին անտեսվել: Սակայն երբ որոշ հարցերի գիտական վերլուծությունը պահանջում էր հաշվի առնել ոչ նյութական ոլորտը, Կ. Մարքսն այդ անում էր առանց որևէ վերապահության: Դա վերաբերում է նաև արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքի պրոբլեմի ուսումնասիրությանը:

Ինչ վերաբերում է այն տեսակետին, որ ոչ նյութական բարիքները կամ ծառայություններն աղծեք չունեն, ապա դա Կ. Մարքսը չի պաշտպանել, այլ հերքել է. «Աշխատանքի նյութականացումը և այլն,— գրել է նա,— չպետք է հասկանալ այնպես, շոտլանդական ձևով, ինչպես այդ հասկանում է Ա. Սմիթը: Երբ մենք խոսում ենք ապրանքի՝ որպես աշխատանքի նյութականացված արտահայտության մասին—ապրանքի փոխանակային արժեքի իմաստով, ապա խոսքը դնում է ապրանքի գոյության միայն կարծեզյալ, այսինքն՝ բացառապես սոցիալական եղանակի մասին, որը ոչ մի ընդհանուր րան չունի նրա նյութեղեն ռեալության հետ. ապրանքը պատկերացվում է որպես հասարակական աշխատանքի կամ փողի որոշակի քանակություն»¹², Կ. Մարքսը միայն իբրև արտադրողական աշխատանքի յրացուցիչ, պայմանական բնութագիր ընդունել է նյութական հարստության մեջ նրա մարմնավորվելը, կատարելով այն վերացարկումը, որ կապիտալիստական արտադրությունը սահմանափակվում է միայն նյութական արտադրության ոլորտով և չի ընդգրկում ծառայությունների ոլորտը: Զիշտ նույն կերպով նա մի կողմ է թողել նաև մանր գյուղացու աշխատանքը, որը չնայած նյութական արժեքներ է ստեղծում, բայց հավելյալ արժեք չի ստեղծում և չի պատկանում կապիտալիստորեն արտադրողական աշխատանքի շարքին: Արտադրողական աշխատանքի այս օժանդակ բնութագիրը, որը վերաբերում է արտադրողական աշխատանքի սպեցիֆիկ կողմով բնորոշմանը միայն, ճիշտ է այն ժամանակվա կապիտալիստական արտադրության, բայց ոչ ներկայիս կապիտալիստական գլխավոր երկրների համար, որտեղ ոչ նյութական արտադրությունը ենթարկվել է կապիտալին:

Այսպիսով, եթե Ա. Սմիթի սխալը դեռևս կարելի է որոշ չափով արդարացնել այն պատճառով, որ նրա ժամանակներում կապիտալը տնօրինում էր համարյա բացառապես նյութական արտադրության ոլորտում, և եթե նույն այդ հանգամանքից ելնելով Կ. Մարքսը կարող էր եզրակացնել, որ արտադրողական աշխատանքը կարող է լրացուցիչ բնութագիր ունենալ նաև արդյունքի իրայնացման հատկանիշի տեսակետից, ապա նույնը չի կարելի պընդել ներկայիս զարգացած կապիտալիստական արտադրության մասին: ԶԷ՞

¹² К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, с. 154.

որ ներկայումս հանրահայտ է այն փաստը, որ այդ երկրներում կապիտալը թափանցել է արտադրության բոլոր ոլորտները՝ դուրս մղելով արտադրության մինչև կապիտալիստական ձևերը, և հասարակական կյանքի բոլոր ոլորտները կապիտալի տեսանկյունից արտադրողական են:

Բայց նույնիսկ այն դեպքում, երբ ոչ նյութական բարիքների արտադրությունը կապիտալիստորեն չի կազմակերպված, սակայն հանդիսանում է ապրանքային արտադրություն, դարձյալ այդ ոլորտում արժեք ստեղծվում է, չնայած նրան, որ հավելյալ արժեք չի ստեղծվում: Այդ են վկայում նաև Կ. Մարքսի հետևյալ տողերը. «Արտադրական պրոցեսը, որպես աշխատանքի պրոցեսի և արժեքի գոյացման պրոցեսի միասնություն, ապրանքների արտադրության պրոցես է. որպես աշխատանքի պրոցեսի և արժեքի աճման պրոցեսի միասնություն, նա արտադրության կապիտալիստական պրոցեսն է, ապրանքային արտադրության կապիտալիստական ձևը»¹³:

Այսպիսով, գալիս ենք այն եզրակացության, որ նյութական և ոչ նյութական ոլորտների պրոբլեմն արտադրողական աշխատանքի գլխավոր հատկանիշի հետ անմիջական կապ չունի: Տվյալ դեպքում այս ուսումնասիրությունն անհրաժեշտ էր ոչ նյութական արտադրության ոլորտի իրական դերը բացահայտելու համար: Կարելի է ուսումնասիրել, թե տվյալ արտադրահարաբերությունների տեսակետից արտադրողական համարվող աշխատանքի ո՞ր մասն է ծախսվում նյութական արտադրության ոլորտում և ո՞րը՝ ոչ նյութական արտադրության ոլորտում: Կամ, կարելի է քննարկել, թե ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր ոլորտում զբաղված աշխատողների և արտադրության միջոցների կազմում որքա՞ն է աշխատողների և կիրառվող միջոցների բաժինն արտադրական հարաբերությունների այս կամ այն համակարգում: Երկու ոլորտներին վերաբերող պրոբլեմների ուսումնասիրության համար համար արտադրողական աշխատանքի համընդհանուր բնորոշումը հնարավորություն է տալիս ճիշտ մեկնաբանելու ոչ նյութական արտադրության դերը որպես արժեքի ստեղծմանը մասնակցող ոլորտի և դրա հիման վրա վերլուծելու ժողովրդական տնտեսության այդ ոլորտների հարաբերակցությունը:

Հետաքրքիր է, որ վերջին տարիներին արտադրողական աշխատանքի ոլորտը նյութական արտադրությամբ սահմանափակող որոշ տնտեսագետներ, կարծես աննկատելիորեն, հակադրվում են այդ տեսակետին, արտահայտելով այն միտքը, թե սոցիալիզմի ժամանակ ապրանքային արտադրությունը գործունեության փոխանակության ընթացքում պահանջում է համարժեքություն պահպանել, որի հետևանքով ոչ նյութական բարիքներն արժեքային կամ դրամական գնահատում են ստանում¹⁴: Բայց քանի որ նրանք միաժամանակ պնդում են, որ ոչ նյութական բարիքներն արժեք չունեն, ապա, հետևապես, նրանց դրամական գնահատումն արժեքի արտահայտություն չէ և համարժեքային փոխանակությունն անհնար է իրականացնել: Արտադրողական աշխատանքի նշված տեսակետի կողմնակիցները նաև այն միտքն են արտահայտում, որ նյութական բարիքների արտադրությանն անմիջականորեն նպաստող գիտության և տնտեսական կառավարման ապարատի աշխատողներն արժեք են ստեղծում¹⁵: Դա նշանակում է, որ արտադրողական աշ-

¹³ Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 208:

¹⁴ М. И. Скаржинский, *նշվ. աշխ.*, էջ 22, М. В. Солодков, А. И. Семенов, *նշվ. աշխ.*, էջ 150:

¹⁵ М. С. Кукушкин, Развитой социализм и производство материальных благ, Л., 1975, с. 32; В. С. Неркарян, *նշվ. աշխ.*, էջ 90, М. В. Барабанов, Изменение структур конечного общественного продукта главных капиталистических стран, М., 1976, с. 12; А. И. Скаржинский, *նշվ. աշխ.*, էջ 257; Я. Кваша, В. Красовский, Перспективное планирование и хозяйственные измерения («Вопросы экономики», 1968, № 4, с. 72—73).

խատանքի սահմաններն աստիճանաբար ընդլայնվում են: Անհասկանալի է սակայն, թե աշխատանքի այդ տեսակներն ինչպե՞ս սկսեցին արժեք ստեղծել, եթե առաջվա պես կարելի է պնդել, որ դրանք նյութական բարիքներ չեն ստեղծում: Կամ, եթե որոշ աշխատողների մտավոր աշխատանքը կարելի է բնութագրել որպես արտագրողական, ապա ինչու՞ այդ նույնը չի կարելի ասել այդ բնագավառի մնացած աշխատողների նկատմամբ, որոնց աշխատանքը չի տարբերվում աշխատողների մյուս մասի աշխատանքից:

Նշանակում է, հասարակական պրակտիկան ևս թելադրում է վերանայել ոչ նյութական ոլորտում ծախսվող աշխատանքն արտագրողական չհամարելու ավանդական տեսակետը: Այդ տեսակետը երկար ժամանակ արգելակել է ոչ նյութական ոլորտին վերաբերող հարցերի օբյեկտիվ վերլուծությունը, այդ ոլորտի զարգացումը, խոչընդոտել է այնտեղ կատարվող ծախսումների արդյունավետության որոշմանը, ինչպես նաև արհեստականորեն իջեցրել է ժողովրդական տնտեսության մեջ ստեղծվող նոր արժեքի մեծությունը՝ նրա ստեղծումը սահմանափակելով միայն նյութական արտագրության ոլորտով:

ПРОБЛЕМА ПРОИЗВОДИТЕЛЬНОГО ТРУДА

ДОНАРА ЛАЗАРЯН

Резюме

В экономической литературе проблема производительного труда часто смешивается с проблемами определения сфер материального и нематериального производства, национального дохода и совокупного общественного продукта. При этом экономисты производительным (т. е. способным создавать стоимость) считают только труд, затрачиваемый в материальном производстве. Доводы, приводимые ими для обоснования своего мнения, неубедительны. Долгое время такое мнение мешало объективному анализу вопросов, касающихся нематериальной сферы, ее развития и определения эффективности производимых здесь затрат, породило искусственное снижение величины создаваемой новой стоимости, ограничивая ее рамки только сферой материального производства. Экономическое учение К. Маркса дает ключ к разрешению этой проблемы и преодолению подобных взглядов.